



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 18-Ա

ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐԴԱՁՈՐԻ ԽՃՈՒՂԻ 11-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ13 ՀԱՍՑԵՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ 05-033-0131-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,20 ՀԵԿՏԱՐ  
ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՍՈՒՐԵՆ ԼԻՊԱՐԻՏԻ  
ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ 314,29  
ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Ինքնակամ կառույցների օրինականացման տնօրինման կարգը հաստատելու մասին>> 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետերով, <<Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարարական ուարտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական ու արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածազնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարին հասցեագրված հողամասի համասեփականատերեր՝ Սուրեն Լիպարիտի Ներսեսյանի և Ժենիկ Սերոբի Ներսեսյանի դիմումը՝ Երանոս համայնքի Վարդաձորի խճուղի 11-րդ փակուղի թիվ13 հասցեում գտնվող տնամերձ հողամասի վրա իր կողմից 314,29

քառակուսի մետր արտաքին չափերով երկհարկանի բնակելի տան, բնակելի տան 2-րդ հարկի բաց պատշգամբի, հացատուն անասնաշենք ու պարիսպ օժանդակ շինությունների, ինչպես նաև հաշվի առնելով, որ հողամասի նկատմամբ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որը չի հակասում քաղաքաշինական նորմերին՝

Որոշում եմ՝

1. Վերականգնել Երանոս համայնքի Վարդաձորի խճուղի 11-րդ փակուղի թիվ 13 հասցեում գտնվող 05-033-0131-0007 կադաստրային ծածկագրով 0,20 հեկտար տնամերձ հողամասի վրա համասեփականատերեր Սուրեն Լիպարիտի Ներսեսյանի (ծնված՝ 01.12.1947թ., անձնագիր՝ AR0259113, տրված՝ 07.04.2017թ. 043-ի կողմից), Ժենիկ Սերոբի Ներսեսյանի (ծնված՝ 07.01.1952թ., նույնականացման քարտ՝ 001159375, տրված՝ 24.03.2014թ. 043-ի կողմից) կողմից 2010 թվականին ինքնակամ կառուցած երկհարկանի բնակելի տան՝ արտաքին չափերը՝ 240,0 քառակուսի մետր (ներքին չափերը՝ 187,46 քառակուսի մետր), բնակելի տան 2-րդ հարկի բաց պատշգամբի՝ արտաքին և ներքին չափերը 13,80 քառակուսի մետր, հացատուն անասնաշենք օժանդակ շինության՝ արտաքին չափերը 54,09 քառակուսի մետր (ներքին չափերը՝ 43,25 քառակուսի մետր), պարիսպ օժանդակ շինության՝ արտաքին և ներքին չափերը 6,40 (L=32,0 մ d=0,20մ) քառակուսի մետր ինքնակամ շենք շինությունները, որոնք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրանց նկատմամբ ճանաչել անշարժ գույքի համասեփականատերեր Սուրեն Լիպարիտի Ներսեսյանի և Ժենիկ Սերոբի Ներսեսյանի սեփականության իրավունքը:

2. Վերը նշված ծածկագրով հողամասի վրա ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ ապահովելու իրավունք, օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչել օրինական:

3. Պարտավորեցնել Սուրեն Լիպարիտի Ներսեսյանին համայնքի բյուջեի համապատասխան հաշվեհամարին սահմանված ժամկետում վճարել ինքնակամ կառուցած բնակելի տան օրինականացման վճարի գումարը՝ 200165(երկու հարյուր հազար հարյուր վաթսուն հինգ) ՀՀ դրամ, որից բնակելի տան համար (240,0քմx10000դրամx0,069=165600 դրամ) բնակելի տան 2-րդ հարկի բաց պատշգամբի համար (13,80քմx10000դրամx0.069=9522դրամ) հացատուն անասնաշենք օժանդակ շինության համար (54,09քմx6000դրամ x0,069=22393դրամ)

պարիսպ ( $L=32,0մ$   $d=0,20մ$ ) օժանդակ շինության  
համար ( $6,4քմ \times 6000դրամ \times 0,069=2650դրամ$ )

4. Պարտավորեցնել Սուրեն Լիպարիտի Ներսեսյանին դիմել ՀՀ ԱԳ ԿԿ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Մելիք Քարամյանի վրա:

6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները՝ 60-օրյա ժամկետում համայնքի բյուջե չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ**

20 19թ.փետրվարի 25  
գ.Երանոս